


Հ. Ս. Ս. Է.

Rédaction du Journal arménien

ARCHALOUYCE

(EGYPTE)

LE CAIRE



ՊՈՑՏՄԱՆԻ

ԵՂԻՊՏՈՍ

Տարեկան գր. ուղչ

30

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան ֆրանգ

10

Քաղաքում 3 ԱԵԼՈՒՍ ԱՆՆՈՒ լիօսարեց զնառնմէ գրեմ պիտի ըլլանք .

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

Թե՛ ԱՐՇՍՈՒՅՍԻ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ ներքակալ խնդրոց համար պիտի քննարկուին ներքազրուեալ հասցեով թերթիս Մասախարախն, որ ե՛

ԳԵՌՄԻ ՓՈՓՈՋԵՄԱՆ

ԿԵ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԾԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրներն ուղղակի պատասխանում են իրենց զրաճներուն

ZUSC 20 ՓԱՄԱ ՈՂԸ

ԿՈՐԵՆՈՐ ԱԶԳ.

Գրաւաններու համար Գործա- կաններու պէտք կայ գիտնել թերթիս խմբագրութեան հասցէին :

ՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԻ ԵՏԲԸ

« Եւ անա զեփեկ եօրը երկնքներ եղան զագիր տախտակ ու նիւար մարմնով : »

Արարիկներն վերջերս հասած լուրերը, որոնց հարազատ արձա- գանգները կը տեսնուին այս էջե- ռուն մէջ ալ, թէ՛ սահմանադրու- կան եւ թէ՛ այլապէս, կրկնակի ցա- ւառիթ բնօրին մ'ունին եւ երբ այս տողերը գրի կառնենք՝ միտքս կու- գայ Ս. Գրքի սովի տարիներու նը- կարագրութիւնը ու ինքզինքիս կը հարցնեմ թէ՛ ո՞վ պիտի ըլլայ հի- մայ այլեւս, փարաւնեան նոյն այս երկրին մէջ, մեր խեղճ եւ օգնու- թիւն ազազակոյ եղբայրներուն հա- գեառու Յովսէփ Գեղեցիկը :

Ա՛յն, սա տառապանքի անվերջ օրերը, սա զաղը տեսքով ու նի- հար մարմնով երկնքները՝ մեր եղ- բայրներուն քով . . .

Ամառ էր. բնութիւնը արե- գակով էր զուարթ, ինչպէս պիտի ըսէր բանաստեղծը, խոտով կը սը- նանէին անոնք ու դարձեալ սովէն կը տառապէին, կը մեռնէին, հի- մա ի՞նչ պիտի ընեն անոնք՝ երբ ձմեռը սկսած է իր անողոք սասա- նը սիւռել երկրին չորս կողմը, ու մենք ալ արդէն մեր առաջին եւ վերջին փամփուռները սպառեցինք անոնց սիրուն :

Հանգանակութիւն մը, կը հա- կնաք անշուշտ. սակէ անդին ի՞նչ կուզէք, եւ ի՞նչ ալ արդիւնաւորու- թիւն . . .

60-70 տակի գուժար մը, Ա- րարիկի համար եւ Զոլաքի մը մէջ ուր Արարիկի ընդ գրած է տարի- ներէ ի վեր, արդիւնաւորութիւն է այս, թէ՛ բարոյական տեսակէտով կատարեալ Քիլասո մը Արարիկի ընդ համար, որոնք թէպէտ գործնական մարդու ալ համար հանած են. եւ ասիկա, ո՞վ խեղ- ճութիւն, այնպիսի օր մը՝ երբ մեր

սովատանջ եղբայրները ամեն յոյս մեր վրայ դրած են ապրելու հա- մար :

Կաղաչեմք, կը պաղատինք, կը գրեն Արարիկին, որ ջանքեր չի խնայէք հանգանակութեան մա- սին, որովհետեւ պատու մը հայի կարօտ ալքատներու քանակութիւ- նը կ'աւելնայ օրէ օր ու թիւնն մը ցորենին զինն է 33-35 գահեկան : Հարկուաւոր ընտանիքի տէր մար- դիկներ ալ պանդխտութեան ճամ- բան բռնեցին՝ իրենց յօրուիս յօճուիս ներք յանձնած հայուն այն սեւ բախ- տին որ վթալ չունին :

Եւ ասոնց աւելցուցէք սուր- քի գանձումին խոտով իրենները : Ա- ղատութեան անունը կայ ինքը չի- կայ : Հայերուն շատ եւ շատ նեղու- թիւն կուտան կար. սուրքի վճար- ման համար կը ծեծեն, կը բանտար- կեն, անկարգուններն մինչեւ իսկ իրր ուղորմութիւն արուած հայազինը ձեռքերն են կը յափշտակեն : Չմեռն ալ մօտ է. ի՞նչ պիտի ընենք եւ ի՞նչ պիտի ըլլանք . . . ըրէ՛ք, ըրէ՛ք ինչ սր կրտսք, եւ թէ՛ մեր ապրիլը ո՞ր է արժէք մ'ունի այս անիծեալ աշխարհի մէջ :

Երանի՛ այն քօլիւսը սիրտուսն որ զգալու պէտք չունին :

Բայց զպայուն արարածը ի՞նչ կուզէք որ չընէ այս տողերուն առ- ջեւ, որոնք եղբոր մը մահազան- գակին սարսուռը կազդեն մեր քով ու անոնք, տարբեր տեսակէտով մ'ալ, անաշու գատապարտութիւնն են 80 անցեալ ամուլ տարիներու երկար շրջանի մը :

Ահա ձեզի մարդիկներ՝ որոնք՝ առաջիններէն ըլլալով, ոտք դրած են հաս այն երանելի օրերուն երբ Եղբայրսը հեռուէն կրակի անունին հաւատար բան մը նկատուած էր, եւ սակայն, ըստ ռամկական ասաց- ուածին, ուղիք ուկի կայրեր այն ատեն՝ Փարսանեան երկրում. եւ այդ 80 տարիներէն սկսեալ մինչեւ այսօր ի՞նչ ունեցած է խեղճ Արար- կի ընդ : Այնչ, աւա՛ղ, բացի չու- կայի հատարակ սարաֆներէ եւ ծը- խալածաններէ. բացառութիւն կազ- մելով միայն երկու ալքատու հա- բուստ կաշեցեալներ, անոնք ալ բան մ'եղած՝ ոչ թէ իրական արժանիքով մը, այլ եւ աշխարհային դիպուած- ներու՝ յաճախ կայր՝ բերումով :

Բախտը, դիպուածները՝ թէ- պէտեւ օգային բաներ են ինչպէս են շատ մը ուրիշ բաներ, բայց եւ այնպէս անոնք գոյութիւն ունեցած են մարդուն քով իբր յոյսի յենա- կէտ մը : Ասկէ անդին անհասանելի հեռաւոր՝ համայնքներ կը յուռա- ջանան կամ կը տկարանան իրենց խեղացութեան համաձայն : Մին կը յաջողի որովհետեւ խելք, կորով եւ յանգիւնութիւն իր վրայ միացնել կը գիտնայ, միւս մը չի յաջողի ու- թովհետեւ շատ անհաշիւ կը գործէ՝ ըսկ երեակայութեան անձնատուր ե- ղած : Երբորք մը ոչ մին է եւ ոչ միւսը : Վերջին ծայր խնայողութիւն, ինքնամփոփ գործ, սովորական գործ, ուրիշ ոչինչ :

Այս վերջին դասէն են կարելի է ըսել մեր պատուարժան հայրենա- կիցներէն Եղբայրսը եղբայրք, ու- թոնք զժբաղդարար ոչ ոնէն որ գա- սակարկին արժանավայել անունը ունին եւ ոչ ալ հմայրը :

Իրենց մեծ արժանիքը եղած է աւանդապահ ըլլալ իրենց հողերը այս պայտին կտակած արհեստին, Քալիզ- ճուրխն, որուն որ փարած են հողուով եւ մարմնով :

Մարդկային ազնիւ փառասի- րութիւնները, գեղեցիկ, բարձր ի- տեալները կարծես գոյութիւն չու- նին իրենց համար, կեանքի իրենց մեծ նպատակակէտը ըլլալով Մէն- շիյէի մղկիթին ստորոտը համեստ եւ անչուք մարդիկներ մնալ, սարաֆ ապրիլ, բողոքական մեռնիլ, սահ- մանափակ զրազում մ'ունենալ եւ թողուլ որ իրենց զաւակները իբր պաշտօնեայ ծառային օտար վաճա- ռատուներուն մէջ մինչգեռ իրենք շատ դիւրութեամբ կրնային—եւ պէտք էր որ ընէին— պաշտօն հայթայթել ուրիշներուն, այնպէս ինչպէս կը- նեն Մաթոսեաններ եւ դեռ ուրիշ- ներ, ու տակաին քանի մը տա- րիներէ ի վեր Գործարանատէր հըռ- չակուած Հոսէթեան Եղբայրք :

Ամէն ոք ազատ է, պիտի ըսէք թերեւս, իր խորհելակերպին եւ գոր- ծելակերպին մէջ, ինչ փոյթ թէ անդին ամբողջ համայնքն է որ պի- տի տուժէ անոնց ձեւին կամ եղա- նակին կիրարկումովը :

Աւ մի՛ ալ զարմանաք երբ այս խորհելակերպով սնած բայց առնը-

ւազն 100,000 սակույ կարողութեան տէր մարդիկներ միայն —3— ոսկւոյ գուժարով մը իրենց ամբողջ պարտա- քը կատարած կը համարին, այն- պիտի օր մը երբ հայրենիքը հազար- ներու պէտք ունի . . .

Բայց աւելի ցուալին ու ողբա- լին հոն է որ Արարիկի ընդ ամենա- մեծ դեր մը ունեցած է հաս ամէն կարգի ընկերութիւններ կազմելու գործին մէջ, բայց այս պահուս ու- չինչով կը ներկայանայ իր հայրենի- քի կենսական պէտքերուն առջեւ : Քանի՛ քանի անգամներ անցեալին մէջ բարեգործական — շահասիրական ընկերութիւններ ունեցած է ան, բայց ամենքն ալ կարճատե կեանք մը ունեցած են եւ կամ վարնոց և ետի կ'աւելնեցու հնոց դարձած :

Ինչո՞ւ ունեցած չ'ըլլայինք այս- սօր շահարժանով վաճառատուն մը գործարան մը, բան մը վերջապէս որմէ օգտուէր թէ՛ անհատը եւ թէ՛ մեր տարաբաղդ հայրենիքը իր ներ- կայ ճգնաժամին մէջ :

Աւ հիմայ որ անոր օգնութեան հասնելու միջոցներ չունինք, ինչո՞վ պիտի պատասխանենք, սիրելի հայ- րենակիցներս, մեր եղբայրներուն նորանոր դիմումներուն :

« Ա՛յ կարեմք » ով, եւ ասիկայ կը նշանակէ դնացէ՛ք, մեռնի՛ք :

— Ի՞նչ

— Եղբայրք, քոյրք . . . Եսասիրութեան եւ անմիաբանու- թեան դահիճներ՝ ես, դուն, եւ այն բոլոր սպորմիլի մարդիկները, որ 80 տարիներէ ի վեր եկած ապրած են բուրգերուն շուրին տակ՝ առանց Յովսէփ Գեղեցիկներ արտագրելու . . .

Ս. Օ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԵՂԻՊՏՈՍ

ԳՐԱՆՈՒՆ ԳՐԱՂ. ԳՈՂՈՂՈՑ ԹԻՒ 760

ԿՈՂ

ԱՌ ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ԱԶԳԱՅԻՆՍ

Գրահիւրէ 10 նոյեմ. (Ն. Տ.) 908

Կ. Պօլսոյ Մամաթիա թաղի Ազ- գասիրական Ակումբը գրով մը յայտ- նելով թէ՛ իր նպատակն է տեղւոյն Պարզըլի Ազգ. Գեղեցիկանատան

մէջ հանդիպող Հայ Նահատակներու հողակոյտին վրայ շքեղ մահարձան մը կանգնել, առ այս կը խնդրէ Եզր-պտտսի Հայ ժողովրդեան ալ նուէր-ներն :

Ազգային Գաւառ. Վարչութեան Պատ. Բարաքական Ժողովոյ որոշ. մամբ՝ այսու Գահիրէի և շրջակա-յից մեր ազնուասիրտ ազգայնոց հը-րաւէր կը կարգանք, որ բարեհա-ծին իրենց սիրայօժար նուէրներով մասնակցել այս կարեւոր և հայրե-նասիրական հանգանակութեան :

Նուէրները փոխան ընկալադրի կ'ընդունուն Առաջնորդարանին գի-ւանատունը, Հայկէֆ. Ինայէթեանի վաճառատունը (ի Սի.բ.բէ կըստ Գա-հիրէի) և Համբարձումէֆ. Փափազ-եանի վաճառատունը (Շարա֊Պուլազ, Օթէլ Գոթիֆինանի վրայ ներքև Գահի-րէ) :

Նուիրատուներու անունները պիտի հրատարակուին տեղական Հայ լրագրիներու մէջ և գոյանալիք գումարը պիտի զրկուի Կ. Պոլսոյ Պատ-րիարքարանը, իր նպատակին գոր-ծածուելու համար :

Սրտագին օրհնելով մեր սիրելի ժողովուրդը և յաջողութիւն մաղթե-լով ամենուն :

Մնամ ազովարար

Առաջնորդական փոխանորդ Հայոց Գահիրէի

Յարութիւն Բահ. Յակոբեան

Ն.Ս.Մ.Ա.Կ.Ա.Ր.Ա.Բ.Կ.Ի.Բ.Է.Ն

Տ.Ե.Ղ.Ե.Կ.Ո.Ի.Թ.Ի.Ի.Ն.Ե.Բ

(Շար. նախորդ թիւէն)

ԳԱՂԱԲ. ԿԱՅՈՒԹԻՒՆԸ. - Յաւալի է ըսել, թէ աակաւին հին րէժիմին գաղափարը չի փոխած հա-յեր ալ ունինք. յ'անցելու մի իրենց աւան դէջ կողմերով ծանօթ հայեր այսօր տակաւին նոյնը կը մնան : Գայմազամի օղնական Սատիմ Չու-քասզեան, բնիկ Սերաստացի մեծ սրիկան ամեն ճիգ ի գործ կը դնէ, հնորաւոր միջոցներ կ'ստեղծէ՝ տը-գէտ թիւրք ժողովուրդը և վատ անցեալով հայեր իրեն գործիք ը-րած՝ կաշխատի վայրկեան յառաջ հեռացնել առ Գայմազամ պէյը, որուն համար ինչպէս ըսինք՝ աղա-տական մ'է : Այս մեծ սրիկան եր-բեմն փոխ, երբեմն խաւիցի/ի պաշտօն ունեցած է Թ.քատի, Ա-մասիոյ սահմաններուն մէջ և շատ անգթ թիւններ գործած :

Համբաւաւոր այս անբարոյակա-նին մանրանկարը կ'ենայ սեպուիլ Թահսիլչար Գրիգոր Ե. Պատմաճ-եան անուն վատասիրտ երիտասարդը-որ իր վից տարուայ պաշտօնավա-րութեան շրջանին, չէ՛ խղճացած նոյն իսկ անոք այրիներու և բ տարկեալ Հայ ազգայնոց կիւրքու պատուոյն սպառնալ ու բռնաբարել, առաջնորդելով Թուրքերն ալ : Պաշ-տօնի կիրառութիւնը չափազանց ան-գթօրէն ի գործ դրած է. աղքա-տին լացը, անօթութիւնը, մեր-կութիւնը երբէ՛ք խղճին վրայ կշիռ չէ դրած, վատութեան մարմնա-

ցու՛ր կը կրէ իր բոլոր հանդաման-քով :

Առ երբ ժողովուրդը հանդիսա-տեար կ'ըլլայ այս և այսօրինակ սրի-կաներու պաշտօնի շարունակութեա-նը, հաւատարմ չ'զար ներկայ քա-ղաքական մեծ յեղաշրջութեան՝ որ իր մէջէն ծնցուց հաւատարմեան, եղբայրութեան, աղատութեան և արգարութեան լուսասփիւռ շողերը :

Ա.Ո.Չ.Ն.ՈՒԳ.ԱՐՄ.Ն.Վ.Ի.Ճ.Ա.Կ. - Առաջնութեան շողերը թափանցած են ժողովականներէ ունեց միայն որ-տին մէջ, հաւատարմեան գիտակ-ցութիւնը լաւ չեն ուզեր ըմբռնել մեծ պաները. արգարութիւնը ընդ-զրկել խղճի գործը կը մնայ, սա-կայն գիտակից տարրը կը ներէ ասոնց եղբայրարար, երբ եղբայրութեան ձայնը խորթ կը հնչէ մեծ պանե-րու ականջին :

Առաջնորդն է որ պիտի գործէ, ա'ն է որ պիտի խորհի. այսպէս կը մըռնեն. փառք իրենց ձեռներէ-ցութեանը կը վերադրեն, ձախու-ղանքը սակայն առաջնորդի անկարո-ղութեան : Ինչ որ անբնական է բու-լբուլին :

Չորս տարուան պաշտօնավարու-թիւնը մեր ներկայ Առաջնորդ-Տե-ղապահն այն միակ առաւելութիւ-նը չունեցաւ, որ գիտցաւ հաւե-րոյն վերաբերութեան մէջ զնեղ կառավարութիւնը տեղական ժողու-վրդեան հետ. միջոցներ ստեղծեց իր միակ ձեռնարկին՝ Մայր եկեղե-ւոյ վերանորոգութիւնն ի զլրիս հա-նելու, որուն խաղաղասներ չ'պակ-սեցան նոյն իսկ հայերէն ալ. հոս ու հոն գիմուսներով սեղմուած վի-ճակը կը թական գործին, ջանաց ընդլայնել. լայն կարօտեալին, որ-բին ու անտէրին մեղեացուց տեղա-կան ու այլ միջոցներով :

Իր ժողովրդեան օղտին համար վա-տերու և շարամիտներու զլուխ խո-նարհացուց, բարեկամացաւ անոնց, զհարկութեամբ ազրեցաւ, և այդ շորս տարուան շրջանին շինեց իր փորձառութիւնը, թէ՛ մարդ պար-տի միմիայն վստահիլ իր անձնական ճիգերուն ու գործունէութեանը, և ապա յոյս ներշնչել իր շուրջիննե-րուն, որոնք լրացուցիչ մասը կը կազմեն նպատակի յառաջացմանը : Այս, միմիակ ապրեցաւ. կրօնական դասն անդամ իրմէ հեռացնելու ի-րաւունքն ունէր, այն բազմազմի պատճառներով, զորս տեղի տուած էին ժողովրդեան արգար տրտունջ-ներուն, չգտաւ անոնց մէջ կղբայ-րական սէրը, անշահախնդիր ողին, Գրիտունեական զգացումը :

Ամէն դիէ կաշկանդուած ըլլա-լով հանդերձ՝ չ'ընկրկեցաւ ո'չ մէկ դժուարութեան առջև, ու հիմայ որ աղաւտութիւնը աւելի կը դատեպնդէ զինք, կը բազմանք տեսնել աւելի եռանդաւրին գործելու, պաշտպա-նելու ազգագատկան շահերը, մէջ տեղ բերելու, գոնէ հաշիւը, կուլ տրուած գրամներուն՝ որոնք յանուն դպրոցի կամ աղքատի հասած, ու չեն ծառայած իրենց նպատակին, իրմէ առաջ պաշտօնի զլուխ գտնուող Ա-ռաջնորդ-փոխանորդի օրով :

ԲԱՐԵԿԱՄԳ

ԱՆՈՐ՝ ՈՐ ԾՈՎԵՐԷ ԱՆԴԻՆ Է

Հնուն, հենոն՝ ծովերէ կոյս պասկերը կ'ստեղծէ. կոյս սևուրջները խեղագին ծուէր եղան իմ կեանքին ... սի'ն ...

Կոյս պասկերը կ'ստեղծէ Տակցող սիւսու գերը հիւրէ, Հիւսայ ու իմ ցուրս հոգին Թուէր կտակ անագին ...

Միտ խորը սկիւտե կայ Այիֆերով՝ խի'ս հսկայ. Հոն կայ ևս կեանք քանկագին Վիսերով լի՝ բայց անգին ... Անկեղին ...

Հնուն հենոն անասնուն Տուսյակներու կը խաչան. Հոգիս հենց հրդեհուած Մեր կորստայ, ո'չ Աստուած Եւայի՛ ծած ... Գ. Կ. ՏԵՐՄԵՆՅԱՆ

Գահիրէ 5 Ապրիլ 1908

ՀՍԻՍՔԱԿԱՆ ՆՈՒՍԿԸ

Մեր պրոպագանդիստներն ունակ՝ նախորդ րուով կըստ նրաստարարին մը կարգա-լով, նեստրիստու և զիսեայ րե՛ ինչ կը յովանդատարին Առաջնորդարանի շրջանում նախապէս նախկին :

Մեզի կըստ հարցումներուն մեկ ան-գաւով գոնացուլ սալու համար, այսօր կը-րաստարարեան կուսակց այդ նախկին, որուն պատասխանը այս անգամ ևս սալ չ'բարեկամեցաւ մեր Ազգային Առաջնոր-դարանը :

Ահա վերոյիշեալ նամակին ընդօ-րինակութիւնը, որ ապահովագրեալ զրկուած է :

ԽՄԲ.

Գահիրէ 25 Հոկտ. 908

Արթ. Տ. Յարութիւն Ա. քհնյ. Յակոբեան, Առաջնորդական Տեղապահ և նախագահ Պատ. Բաղաք. Ժողովոյ Գաւառ. Վարչութեան՝ ի Բաղաքիս Արթ. Տէր հայր :

Տիար Եղիշէ Թորոսեան ամսոյս 20 թուակիր նամակու մը մեզմէ կը խնդրէր որ, իր ունեցած գոյ-քերուն՝ ցանկաբացութիւն մը կատարու-ուէր մէր ՎԿՍՈՒԹԻԱՄԲ, որոնք Առաջնորդարանի միջոցաւ ի պահ դրուած են եղբր Գեղեկալէ սենեակի մը մէջ և որուն վարձքերուն համար վերջերս սան տիրոջ կողմէ դատ-բացուած՝ և միւս կողմէն ալ գոյ-քերը՝ ինչպէս կ'իմանանք՝ անխնամ վիճակի մէջ ձգուած ըլլալով, Տիար Եղիշէ Թորոսեան կողմէ ցանկագրու-թիւն մը կատարել և վերցնել իր գոյքերը :

Այս նպատակաւ յիշեալ ամբող-ջագէտ վճարելով սենեակին յետ-նեալ վարձքերը, ի ձեռին ունի վարձագին ստացալիլը :

Մենք՝ ստորագրեալքս՝ նկատի ունենալով յիշեալ անորոջ կացու-թիւնը և ատկէ յառաջ Ե Կ Ա Մ և Գ Ա Լ Ի Ք Վ Ն Ա Ս Ն Բ Ը, խոր-հրդակցութեան մը համար գումար-ուելով՝ որոշեցինք խնդրել Պատ. Վարչութեանէդ, որպէս զի « Պատ-ուիրակութիւն մը հաճի զրկել ա-ռաջիկայ Շարաթ առաւօտ ժամը Զին՝ յիշեալին գոյքերը գանուած Զեզի ծանօթ տեղը, միտին ցան.

կողբելու և տիրոջ յանձնելու հա-մար :

Այս նամակը կը խնդրենք Պատ. Ժողովոյդ որոշումը մեզ հարորդել, գո'նէ առաջիկայ Ուրբաթ օր հետե-կալ հասցէին :

M. O. Toumanian
B. P. 1100
Le Caire

Սպասելով Ձեր շուտափոյթ պատասխանին՝

Մնամք խորին յարգանք
Մ. ԱՅՎԱԶԵԱՆ
Օ. ԹՈՒՄԱՆԵԱՆ
Գ. ՓԱՓԱԶԵԱՆ
Գ. ՓԱՓԱԶԵԱՆ
Ե. ՏԵՄԵՆՅԱՆ

Ն.Ս.Մ.Ա.Կ.Ա.Ր.Ա.Բ.Կ.Ի.Բ.Է.Ն

ԲԱՂԵՑԻ ՎԻՃԱԿԸ

(Շար. նախ. թիւէն և վերջ.)

Սակայն այս ամէնը երէկի վիճակն էր, սահմանադրութեան արշալոյսը կը խոտտանայ լինել կենսապարզու եւ խը-րախոսիչ, արձակուած են արքիներու փոշին տակ ժանդարտ շրջանները, խղուած են պրիւուզ կապանքները, և տոնային մտաւոր ու բարոյական վե-րազարթնումի անհրաժեշտութիւնը ըզ-գալի կը լինի ամէն մտածող ուղեղնե-րի մէջ : Կը խօսին, կը ծրարեն, կը քննադատեն, սակայն կըր գործելու ժամը կը հասնի ամէնքը մէկէն կը խու-սափին նախաձեռնութիւն ստանձնելէ :

Մեզի ի'նչ սահմանադրութիւն, թոյ սահմանադրութիւնն օգտուին ա-նոնք, որոնք իրենց ազգայնէր ջանքե-րովը աստիճան մ'ուս նուիրական կը գործեն զայն, օրական սեռակ մը փոր-ձանք կը բացուի մեր պիտուն, ո'վ կը համարձակի ողջունել սահմանադրութիւ-նը, ծանօթ հայ վատասողի արարած-ները շինելու հետ նորարող գաւաղրու-թիւններ կը սարքեն, և կը քաջալը-րեն թուրքերու սրիկայ դատակարգը որ յարձակումներ գործեն նոր քաղաքակա-նութեան նկատմամբ համակիր եղողնե-րու վրայ, կըրք տեսակ դատակարգի գերի եղած ենք, հայ աղաներու, բար-բարոս բարձ խուճակի պարագրախ շե-խերուն, և կ'առաջարկուի սեղացի պաշ-տօնակներու :

Առհաս այս պատճառաւ տեղոյս երիտասարդութիւնը խոնկեցնուած մը ծակաւուս ըրած՝ զի չի կրցան հասա-տուն միտ թիւն մը յառաջ բերելու և Ազգային շրջանակներէ վստահու վա-տանաբաւ և զեզմանող աղաները պաշ-տօնի կանչելու նոր ու թարմ ոյժեր, զէլ կազմակերպելու վարժարանները, ազգային վարչութիւնները եւայն. ու-րոնք տարիներէ ի վեր փոտած քայքայ-ուած են :

ՓԱՐԱՒՈՆԵԱՆ գերութիւնը մահա-ցուցած է Բաղաքի հայ տարրի մէջ ինք-նագիտակցութեան, պատուոյ և բարո-յակոտի վիճ զգացումները :

Ներկայ սերունդը կը կրթուի փո-ղացային անբարոյացուցիչ միջնորդութիւն մէջ, ցարդ գոյութիւն չունենալով կա-նոնաւոր վարժարաններ :

Հսկայաքայլ զեպի բարոյական քայքայում գիմող մի ամբողջ հասարա-կութեան զնացքը կործանուածն զէպ ի վերականգնում ֆեֆուլու համար պէտք են վաճարաններ, շուտով սկսելու նորահաս մանկիկներու գիտակցական կրթութեան գործին, ժամանակի ող-ւոյն և պահանջներու համապատասխան ուղղութեամբ :

Երկարատե քաղաքական հալա-ծանքը այրիացուցած ու որբացուցած է հաղաբարող դեռատի կիներու տղաքներ, որոնք քաջ կուտան կեալը մուրացկա-նութեամբ և քերտերու տուններու մէջ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՄԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԸ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷՔԻՅԷ



ՄԵՓԱԿԱՆՍԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐՔ

ՅԱՏԿԱՆԻՇԸ ԻՐԵՆՅ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է .

Արեւելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի ածան գներով ունենալու կամ լայնելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի պէտք է նախընտրել մեր վաճառատունը .

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարետներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար հարկ չ'կայ հոս ու հոն ժամաւաճառ ըլլալու . բաւական է անոյամ մը անպատճառ այցելել մեր վաճառատներին .

Պարտական ամենաընտիր թէմպէրի տյլ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալի է .

Մ ճգ վաճառատունը վերջապէս, գիններու ածանուծեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անխտելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպայիներէ օրըստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են .

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐՔ

27 տարիէ ի վեր, նա մուծէսարքի եղած է. և իր պաշտօնաւարները եղած են Ազալ, Հոմս, Բէրպէլայ, Պիլէճիք և ուրիշ միջանկ տեղեր. շատ հեռաքրքրուեցայ հասկնալ անոնցմէ՝ որք իրեն ժամանակին այն տեղերը գտնուած են, թէ՛ կարող և թէ՛ բարետիրտ անձ մը ճանչցած են զինք. նաև վերջին տարիներ արի և կարծիք Աւելորդ չեմ համարիր հոս կրկնելու թէ Ազալի մէջ գտնուած ա. տեն, Խալիլ բաշայի նման կուսակալի մը հետ մեծ վիճաբանութեան է բռնուած, մինչդեռ ինք այն ժամանակ պարզ պէլէտիէի անգամ մ'էր սոյն երկու խօսքը կը հասկնան թէ՛ ո՞րտի արի և քաջ մէկ մը լինելու է ինք՝ Խալիլ բաշայի նման սար ու ձոր դարդայնորի մը զինադրելուն համար .

Ուրախ եղիր ո՞վ սիրուն վաճառոր հասար այն նպատակիդ՝ որուն տարիներէ ի վեր կ'սպասէիր, զի ազատ մ'ես այսօր . այլևս ճուռ աչքով չպիտի նային այն որդիներուդ որ կուրծքիդ վրայ ման կ'ուզան . մեռան «ես և դու» ըսողները, հիմայ եղբայրներութիւնն է որ կը սիրէ աշխարհի . մեռաւ բռնութեան լուծը. վերջացան լայ ու կոծերը վերջ պիտի ունենան նաև այն աւարները որոնք գեռ կը շարունակուին սիրուն ծոցիդ անկներ .

Արդեօք ի՞նչ պիտի ըլլար մեր վիճակը եթէ շարունակուէր այն բարբարոսութիւնը, այն ջարդն ու կոտորածը . ուրախացիր ո՞վ զիւրաջի որովհետև արդար . քրտինքիդ հաջը՝ այլևս յափշտակող չկայ . ծըռի՛ր քաղցր քաջարար բռնիւր աւորիդ մանը երգի՛ր ազատ շնչափողով և օրհնութիւն կարգայ շարունակ այն ազատասէր Աստուծոյն՝ որ երեսը քննէ դարձուցած էր . գո՛հ եղիր . լեցո՛ւր շտեմարաներդ աշխատութեանդ բերքերով . մի՛ կասկածիր այլևս կրողպուտէն, այլ ազատ ձգի՛ր անասուններդ որ ճարակին այն կանաչ ու դաւար մարգագետինները որ դու ինքդ ևս ատոնց այնքան գեղեցկութիւն պարզևոյր անխոնջ աշխատութեամբդ . ուրախութեամբ ջրի՛ր այն արտն ու դաշտ որ երեսն նուազած աչերիդ վերջի աչի արտասուաց կաթիլներով կ'օ-

ուղէիր զայն . ազատութենէն յողնած շիգերիդ ուժը վերստանալու համար անկասկած ներհի՛ր այն դաշտին մէջ որ երեսն շիրմիդ էր . ուրախ եղիր՝ զի ազատ ես այսօր .

Կեցցե՛ն ազատութեան հիմնադիրները . եթէ ոչ՝ մենք ալ մեր նախահայրերու պէս բռնութեան լուծէ ճգնուած պիտի մեռնէինք կիտարաց աչքով, իսկ այժմ՝ գո՛հ և ուրախ .

26 Հոկտ . 903 Ծ . ՍԱՌՎՈ

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

— Ռօսթով (Ռուսիա) Պ . Ժ . Պ 2եր զրկած մանտա-բոսթը դանձրուեցաւ . նամակի կ'սպասենք .

— Եալթա Պ . Տ . Ս . բաւական ատեն է 2եր պատասխանին կըսպասենք .

— Պօլիս՝՝՝ Ստանալու պատիւը ունեցանք ձեր պատուականն . Խիստ լաւ մտածած էք . կատարելապէս համախա ենք ձեր դադարներուն . Թիւ 38ը զրկուեցաւ 2եր հասցէին . Յառաջիկայ բօսթով նամակ ունիք . Հաճեցէք որ յառաջ սկիւլ և Պօլսական նամակներն, ուրոնք յետոյ կուզենք պրօշխի ալ վերածել, եթէ հաւանիք .

Թիֆլիզ . Պ . Բրուտոս . — Մեր յանձնարարութիւնը ինչո՞ւ ուշացաւ . Մոսկուա . — Պ . Շ . շնորհակալութեամբ ստացած ենք .

Պօլիս Ս . . . — Ապահովագրեալ նամակ զրկուցաւ 2եր հասցէին . Պատասխանը ուշացաւ . կ'սպասենք անհամբեր . . .

Մ Ա Ս Ո Ւ Գ Ի Ր Բ Ե Ր

—

« Արշալոյս » ի սպարանին մէջ, Շէրիֆ բաշայի պարտէզին դիմաց՝ կը վաճառուին հետեւեալ պրօշխերները .

Ա . ՊԱՆԵԱՆ

ԺՈՂՈՎՈՒՐԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Թիւ 1 Թրքուհին 50 սանթիմ « 2 Հիւլէն 50 »

Թիւ 3 պրօշխեր թլեւ հրաշալիք մը բայց ինչ ինչ նկատուածներով զանց կընենք անունը յիշատակել կարճ ժամանակի մը համար . գինն է մէկ Քրանք . Դիմել Արշալոյսի Խժարագրութեանէն զատ Հեղինակին հասցէին որ է .

Mr. A. Balian
Le Caire

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՒՅՈՒՅԻՉ Ժ . ՆԱՅՏԻՆԿԻՐ

Պալատի փողոց . Խաղնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց Գաֆէ Տը Լա Պուրսի կից

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄՈՍՆԱԺԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկլիֆորնի են և ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է .

400 հ աւելի վիսայակն և և՛ հայաներով վարձարուած, Երաշխատուող մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախիսին մէջ ստացած է .
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՒԻՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ՆՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Ձրի դասեր և նորոգութիւններ, Սինկլիֆ մեքենայից համար, յաճախորդատուններուն մէջ .

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիներու և նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

Դին 2ԱՓԱՒՈՐ

ՕԹԷԼ ՏՐԱՊԻՉՈՆ
ԱՂԻՔՍԱՆԻՐԻԱ

Քանթօ, Սուգուլ Մանկիսի 3 Թէթիլիք-Եղ-Քալչանի փողոց 3 Մանկիսի Մզկիթի ղեմը, Թիւ 3 Պանդոկագոյն - Մ . Կէրպեան

—

Կը յանձնարարուի արդոյ հասարակութեան և ի մանաւորի մեր հայրենակիցներուն քաղաքին կեցրոնը գտնուող և օգուէտ գիրքով սոյն պանդոկը, որ յաճախողները պիտի գտնեն կատարեալ մաքրութիւն և փութական սպասարկութիւն .

Դիմեցէք անոյամ մը և զօ՛հ պիտի մնաք .

Դիմելը չափաւոր են . 28-55

ՍԱՐԳԻՍ Յ . ԹԱՇՃԵԱՆ

Նորոգիչ կարի մեքենաներու, ֆօթօկրաֆներու և կազի վաճառաներու .

Տասներկու տարիներ « Մինկըր » Ընկերութեան քով մեքենայարգարութեան զբաղել յետոյ, այժմ գինւաճառ պաշտօնեայ է զէնքերու և մեքենայարգարան ճիւղին մէջ .

Կարգ մը բարեկամ յաճախորդներու խնդրանաց վրայ, պաշտօնէն դուրս ունեցած իր պարագայ ժամերը պիտի արամագրէ կարի մեքենաներու, ֆօտօհրաֆներու, կազի վաճառաներու, նորոգութեանց և յարգարման .

Առ այժմ իրեն պէտք ունեցողները փոխանակ հոս ու հոն թափառելու կրնան դիմել իր տունը Շարէ Մուհամէտ Ալի Թանթլի Ռապէէ կրնան հարցնել նաև Մեծ Սրճարան Հայկականի Տնօրէններուն, և դարձեալ զիւրութեան համար քարթ բոստալով մը կրնան դիմել « Արշալոյսի » Տպարանին . նշանակելով իրենց հասցէն, Փողոցին անունը և Տունին թիւը .

Իր նորոգութեանց վարձքը պիտի ստանայ իրեն յանձնուած աշխատութիւնները լրանալէ և փորձեր կատարուելէ յետոյ .

Կարի նոր մեքենաներ ալ կը վաճառէ .

19 - 50